

Թիւ 27575
Յունուար 18, 1982

Արժանաշնորհ
Տ. Յուսիկ Զինյ. նշանաւան
Առժամայ Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Գանաստ.

Սիրելի Տէր Յուսիկ,

1982 Յունուար 7ին, Թեմական Խորհուրդի Ասեմապետ Տ. Մամբէ Զինյ. Գուգուեանի եւ ձեր ներկայութեան, տեսակցութիւն ունեցանք Ս. Խաչ Եկեղեցւոյ ժխական Խորհուրդի Ասեմապետ Տիար Արմէն Զիւրքեանի եւ Ասեմադպիր Տիար Ղևոնդ Շահ Մելիքեանի հետ, Թորոնթոյի Տիր Փրինսս պանդոկին մէջ:

Կ'ակնկալէինք որ մեր Դեկտեմբեր 12, 1981 թուակիր նամակին համաձայն զորժադրէիք Թեմական Խորհուրդի անունով ձեզի տրուած հրահանգը: Սակայն ապարդիւն անցան ձեզի նդած կրկին թիւրադրութիւնները:

Ուստի, Թեմական Խորհուրդի որոշումին համաձայն, ձեզի կը հրահանգենք որ Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ տրասու անդամները հրաւիրէք բացառիկ ժխական Անդամական ժողովի, զոր պիտի վարեն Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին կողմէ նշանակուած ներկայացուցիչներ:

Առաջին առիթով ձեզի պիտի ղրկենք բանածելը բացառիկ ժխական Անդամական ժողովի հրաւերին եւ օրակարգին, ձեզի հետ ճշդելէ վերջ՝ ժողովի թուականը եւ վայրը: Այս հրաւերին հետ տրասու անդամներուն պիտի ղրկուի նաեւ Թեմական Խորհուրդի բացատրական տեղեկագիրը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՊՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ ժխական Խորհուրդի Ասեմապետին